յայտնի կայուցանելոյ զիրաւունս իւրեանց, բողոք բարձին յատենի անդ զանիրաւ պահանջմանէ Վրաց և Լատինաց, որք առիթ եղեն այնքան ծախուց եւ վնասուց։ Եւ յետ աւարտելոյ դատին, Հայք վերստին առին հրովարտակ 'ի Սուլթանէն, թէ վասն սեփհականութեան Ս. Յակոբայ և թէ Գողգոթային, ըստ առաջնոյն մնալ 'ի ժառանգութեան Հայոց։

Արդ զԹարգմանութիւն հրովարտակին, զոր տուեալ է Մէլիք Զահր Պերգուդ, արժան համարիմ դնել ասանօր, որ ունի օրինակ զայս։

Զկնի ողջունի պատուոյ եւ մեծարանաց։ Արդ յայտնի է մեզ (իմա կուսակալն կամ փոխանորդն), որպէս և ինձ զոր ինչ միանգամ գրեալ եմ յառաջին հրովարտակն, և առաքեալ առ մեզ մի զկնի միոյ, որք են այժմ 'ի ձեռս Հայոց, Լատինաց և Վրաց, յորս բացայայտ ծանուցեալ են տեղիքն Երուսաղէմի 'ի ձեռս իւրաքանչիւր ազգաց, չհակառակել և չկռուիլ ընդ միմեանս սակս տեղւոյ և եկեղեցւոյ. զի Լատինք և Վիրք դան առ մեզ հրովարտակաւ և մուրհակաւ, նոյնպէս և Հայք հրովարտակաւ, մուրհակօք, վճռաւ չորից դենպետաց, և զօրաւոր հանրագրով, որոց վճիռ եւ զօրութիւն տուէ յաւիտեանս, զի հաստատութեամբ և ճշմարտութեամբ վկայեն թէ՝ վանքն Ս. Յակոբայ, է սեփհական Հայոց, եւ ոչ այլոց։ Եւ յորժամ դայ ոք ասա հանրագրութեամբ և հրովարտակաւ, գրեմ նմա հրովարտակ ըստ տրամադրութեան նոցին։ Այժմ եկն 'ի դուռս մեր դեսպան թագաւորին Վրաց, և յանդիման լինել նորա ատենի մերում, հրամայեցաք գրել հրովարտակ առաջի նորա, որպէս հրամայեցաք գրել առ Տէր Սէթ, (թերեւս իցէ Սահակ) և առ Տէր Յովսէփ, որք էին յազգէ Հայոց, սակս վանաց Ս. Յակոբայ, որպէս և ծանուցեալ իսկ էին մեզ, թէ անց բաւական ժամանակ և վանքն մեր մնաց 'ի ներքոյ դատի, եւ հասին առ մեզ մեծամեծ նեղութիւնք եւ վնասք։ Եւ մեք հաւանեալ գրեցաք առ մեծապատիւ կուսակալն զի կալցի իւրաքանչիւր ազգ ժառանգութիւն իւր. և բնակեսցին 'ի տեղիս եւ յեկեղեցիս իւրեանց, զորս ունէին յառաջագոյն. որպէս վկայեն այսմ մուրհակք և վճիռք դատաւորաց 'ի ձեռս նոցա։